ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ԾԱՂԿԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔ

ք. Ծաղկաձոր 14/09/2021

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ Ն 9
ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ

Համայնքի ավագանու նիստին ներկա էին ավագանու 5 անդամներ:

Բացակա էին՝ Արմեն Գալստյանը, Արման Հակոբյանը

Համայնքի ղեկավարի հրավերով ավագանու նիստին մասնակցում էին՝

Նիստը վարում էր համայնքի ղեկավար՝ Արթուր Հարությունյանը

Նիստը արձանագրում էր համայնքի ղեկավարի տեղակալ՝ Գարիկ Հայրապետյանը

Լսեցին
ԾԱՂԿԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԵՐԻ 14-Ի ԹԻՎ 9 ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱՐԹՈՒՐ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասով՝

Հաստատել համայնքի ավագանու 2021 թվականի սեպտեմբերի 14-ի թիվ 9 հերթական նիստի օրակարգը՝

1. Ամանորյա և Սուրբ Ծննդյան տոնավաճառկազմակերպելու համաձայնություն տալու մասին:

2. Համայնքային սեփականություն համարվող գույքը վարձակալությամբ տրամադրելու մասին:

3. Համայնքային սեփականություն համարվող գույքը անհատույց օգտագործման տրամադրելու մասին:

4. Ծաղկաձոր համայնքի ավագանու 2020 թվականի դեկտեմբերի 09-ի թիվ 65 որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին:

5. Համայնքի կարիքների համար աղբատար մեքենա ձեռք բերելու համաձայնություն տալու մասին:

6. Հողամասը համայնքային սեփականություն ճանաչելու մասին:

Կողմ-5 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 81/

Լսեցին
ԱՄԱՆՈՐՅԱ ԵՎ ՍՈՒՐԲ ԾՆՆԴՅԱՆ ՏՈՆԱՎԱՃԱՌ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

/ՁԵԿ. ԱՐԹՈՒՐ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ/

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառարման մասին>> օրենքի 13-րդ հոդվածի 10-րդ կետով, 45-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով և հիմք ընդունելով <<Պասկալ և Դիոդատո>> սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության տնօրեն Փիեռ Բաղդադյանի դիմումը՝

Տալ համաձայնություն Ծաղկաձոր համայնքի Ծաղկունյաց հրապարակում <<Պասկալ և Դիոդատո>> սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից 2021 թվականի դեկտեմբերի 22-ից մինչև 2022 թվականի փետրվարի 22-ը, ինչպես նաև 2022-2023 և 2023 2024 տարեշրջանների նույն ժամանակահատվածում Ամանորյա և Սուրբ Ծննդյան տոնավաճառ կազմակերպելու վերաբերյալ:

Կողմ-5 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 82/

Լսեցին
ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԳՈՒՅՔԸ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՄԲ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/ՁԵԿ. ԱՐԹՈՒՐ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով և հինք ընդունելով անհատ ձեռնարկատեր Էդգար Ժորայի Հովհաննիսյանի դիմումը՝՝

Ծաղկաձոր համայնքի վարչական սահմաններում գտնվող, Ծաղկունյաց հրապարակի հարակից 1քմ մակերեսով տարածքը վարձակալությամբ տրամադրել անհատ ձեռնարկատեր Էդգար Ժորայի Հովհաննիսյանին՝ ամսական 15 000 (տասնհինգ հազար) Հայաստանի Հանրապետության դրամ վարձավճարով՝ վճարային տերմինալ տեղադրելու նպատակով

Կողմ-5 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 83/

Լսեցին
ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԳՈՒՅՔԸ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱՐԹՈՒՐ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ/

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով՝

<<Ծաղկաձոր կոմունալ տնտեսություն>> համայնքային ոչ առևտրային կազմակերպությանը անժամկետ անհատույց օգտագործման տրամադրել Ծաղկաձոր համայնքի սեփականություն հանդիսացող ինքնագնաց անվավոր խոտնձիչը:

Կողմ-5 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 84/

Լսեցին
ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 09-Ի ԹԻՎ 65 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱՐԹՈՒՐ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ/

Ղեկավարվելով <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով՝

Ծաղկաձոր համայնքի ավագանու 2020 թվականի դեկտեմբերի 09-ի << Ծաղկաձոր համայնքի համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների աշխատակիցների 2021 թվականի թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին>> թիվ 65 որոշման թիվ 1-3 հավելվածները շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածների:

Կողմ-5 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 85/

Լսեցին
ՀԱՄԱՅՆՔԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՂԲԱՏԱՐ ՄԵՔԵՆԱ ՁԵՌՔ ԲԵՐԵԼՈՒ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱՐԹՈՒՐ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 13- րդ հոդվածի 10-րդ մասով՝

Համայնքի կարիքների համար՝ Ծաղկաձոր համայնքում աղբահանությունը ժամանակին և պատշաճ որակով կազմակերպելու համար համայնքի ղեկավարի առաջարկությանը տալ աղբատար ավտոմեքենա ձեռք բերելու համաձայնություն:

Կողմ-5 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 86/

Լսեցին
ՀՈՂԱՄԱՍԸ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱՐԹՈՒՐ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ/

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր Անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի 2010 թվականի հունիսի 1-ի <<Կադաստրային հատակագծերում և քարտեզներում հայտնաբերված սխալների ուղղման հրահանգը հաստատելու մասին>> թիվ 186-Ն հրամանի հավելվածի 9-րդ կետի 5-րդ ենթակետով՝

Կոտայք, համայնք Ծաղկաձոր, Տանձաղբյուրի փողոց թիվ 10/1 հասցեում գտնվող, 0,1200 հա մակերեսով հողամասը ճանաչել համայնքային սեփականություն:

Կողմ-5 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 87/

Ավագանու անդամներ

ԱՐՄԵՆՈՒՀԻ ԱՌԱՔԵԼՅԱՆ

ԳԱՌՆԻԿ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

ԱՐԹՈՒՐ ՀՈՎԱԿԻՄՅԱՆ

ԿԱՐԵՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ԱՐՄԵՆ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ԱՐԹՈՒՐ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Նիստն արձանագրեց՝ Գարիկ Բաղալյանը